խաչը երկու կտոր է արած, իսկ մնացած մասերը քար ու քանդ, ցրուած, հաստատուն պատուանդանի շուրջը (պատկ. 38)։ Տեղացի թուրքերի պատմելով՝ անյայտ անձնաւորութիւններ փորել են խաչարձանի տակը ոսկի գտնելու յոյսով, որի պատճառով և փուլ է եկել յուշարձանը. բայց, հաւանական է, որ զոհ է դարձել այն հայ–չափերը ցոյց են տալիս, որ սա մի մեծ և փառաւոր յուշարձան էր, որ բարձունքի վերայից իշխում էր Վեդիի ամբողջ միջին հովտի վերայ, երեսը դէպի արեւմուտք, եռանկիւնաձև ճակատով ծածկի տակ, կողքերից և յետևից սրբատաշ քարերով պատուած։ Խաչարձանի ճակատին ելնդաւոր խոշոր տառերով գրուած է.

Պատկեր 38

Ամենափրկիչ Զղինգեոլի կործանուած վիճակում.

թուրքական ընդհարումներից յառաջ եկած թշնամական զգացման, որովհետև խաչարձանը չուռ գալով՝ այդպիսի աւերման և ցրուածութեան ենթարկուել չէր կարող։

Բուն խաչի երկարութիւնն է 2,92 մետր (վերին կտորը 1,83, ներքեւինը 1,07), լայնքը 1,15 մետր, պատուանդանի մնացորդի բարձրութիւնը 0,62, իսկ լայնքը 1,04 մետր, նախնական լայնութիւնից պակաս, կտրուած լինելու պատճառով։ Այս

Տ՛ր ա͞ծ ող որմի պարոն Գրիգոր ո[1] եւ
Մամքանա հաւր եւ մաւր Մամիկոնին։

Ամբաքանդակի կեդրոնը խաչելութիւնն է. խաչի գլխին քառանկիւնի տախտակաձեւ հարթութեան վերայ ելնդաւոր տառերով գրուած.

Սայ է թագ/աւ որ հրէից.

---

(1) Երկրորդ գ-ի գլուխը կոտրած։